ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 63-Լ

«02» 08 2023 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու և աշխատանքի հավասարաչափ ծանրաբեռնվածություն ու բաշխում կատարելու, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչությանը համապատասխան հաստիքներով ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազի և դատախազի 1-ական հաստիքները, ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազի 1 թափուր հաստիքը, թիվ 1 կայազորի զինվորական դատախազի տեղակալի 1 թափուր հաստիքը և Շիրակի մարզի դատախազության ավագ դատախազի 1 թափուր հաստիքը կրճատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչության պետի 1, նույն վարչության պետի տեղակալի 1 և նույն վարչության ավագ դատախազի 3 հաստիք ավելացնելու նպատակով, ինչպես նաև Շիրակի մարզի դատախազության ավագ դատախազի 1 թափուր հաստիքը կրճատելու և նույն մարզի դատախազի տեղակալի 1 հաստիք ավելացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի

նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանի 1-ին հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 1-ին բաժնի 2-րդ գլխի 3-րդ կետում «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազ 2» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազ 1» բառերով, նույն գլխի 4-րդ կետում՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության դատախազ 2» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության դատախազ 1» բառերով, իսկ նույն գլխի «Ընդամենը 4» բառերը՝ «Ընդամենը 2» բառերով:

2. Հավելվածի 2-րդ բաժնի 5-րդ գլխի 15-րդ կետում «Վարչության ավագ դատախազ 4» բառերը փոխարինել «Վարչության ավագ դատախազ 3» բառերով, իսկ նույն գլխի «Ընդամենը 8» բառերը՝ «Ընդամենը 7» բառերով:

3. Հավելվածի 2-րդ բաժնում լրացնել նոր՝ 10.1-ին գլուխ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ 10.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՏՈՒԿ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

36.1	Վարչության պետ	1
36.2	Վարչության պետի տեղակալ	1
36.3	Վարչության ավագ դատախազ	3
36.4	Վարչության դատախազ	0
	Ընդամենը	**5**

»:

4. Հավելվածի 2-րդ բաժնի 15-րդ գլխում «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 125» բառերը փոխարինել «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 127» բառերով:

5. Հավելվածի 4-րդ բաժնի 30-րդ գլխի 114-րդ կետում «Դատախազի տեղակալ 2» բառերը փոխարինել «Դատախազի տեղակալ 3» բառերով, 115-րդ կետում «Դատախազության ավագ դատախազ 5» բառերը փոխարինել «Դատախազության ավագ դատախազ 3» բառերով, նույն գլխի «Ընդամենը 14» բառերը՝ «Ընդամենը 13» բառերով, իսկ նույն բաժնի 33-րդ գլխում «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում 109» բառերը փոխարինել «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում 108» բառերով:

6. Հավելվածի 5-րդ բաժնի 45-րդ գլխի 166-րդ կետում «Դատախազի տեղակալ 1» բառերը փոխարինել «Դատախազի տեղակալ 0» բառերով, իսկ նույն գլխի «Ընդամենը 7» բառերը՝ «Ընդամենը 6» բառերով, իսկ նույն բաժնի 46-րդ գլխում «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 88» բառերը

փոխարինել «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 87» բառերով:

7. Հավելվածի 6-րդ բաժնում «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում դատախազների թիվը 125» բառերը փոխարինել «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 127» բառերով, «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում դատախազների թիվը 109» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում դատախազների թիվը 108» բառերով, իսկ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում դատախազների թիվը 88» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում դատախազների թիվը 87» բառերով:

8. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

9. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

10. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին ու դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ